Հավելված 1

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Պաշտոնի (զբաղմունքի) անվանումը	«Նախադպրոցական կրթություն» (նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակ)
Դերը	Սաների գործունեության պլանավորում, ամենօրյա գործունեության կազմակերպում, նրանց սոցիալական, ֆիզիկական, հոգևոր և մտավոր զարգացման ապահովում
Խնդիրների բնագավառ 1. Երեխայի ազատությունն ու իրավունքները	
Աշխատանքային գործընթացը	Հարգում է երեխայի ազատությունն ու իրավունքները:
Կատարման չափանիշներ	Հարգում է երեխաների 1. ազատ շարժվելու , ազատ արտահայտվելու իրավունքը 2. իր գործունեության ձևն ընտրելու իրավունքը 3. ինքնուրույն սովորելու հետազոտելու, հայտնագործելու իրավունքը 4. ձայնի իրավունքը, երբ իրեն վերաբերող որոշումներ են կայացնում 5. իր ֆիզիոլոգիական, հոգևոր և մտավոր պահանջմունքները բավարարելու իրավունքը:
Խնդիրների բնագավառ 2. Նախադպրոցականի զարգացման միջավայրի ապահովում	
Աշխատանքային գործընթացը	Ստեղծում է զարագցնող, հիգիենիկ, անվտանգ միջավայր, որն ապահովում է նախադպրոցականի բնականոն զարգացումը:
Կատարման չափանիշները	1. Անընդհատ հարստացնում է ավելի բազմազան է դարձնում երեխայի գործունեության միջավայրը՝ օգտագործելով նաև գործունեության ընթացքում իր և սաների ստեղծած նյութերը: 2. Միջավայրի կազմակերպման համար արդյունավետ համագործակցում է ծնողական համայնքի և տարբեր կազմակերպությունների հետ: 3. Ներքին տարածքներն հարստացնում է բույսերով, դրանց խնամքը կազմակերպում սաների հետ: 4. Սաների և ծնողների հետ խնամում է բակը, ծառեր տնկում, ծաղիկներ և այլ բույսեր աճեցնում. բակի խնամքը դարձնելով երեխայի գործունեության (զարգացման) միջոցներից մեկը,այն վերածում է պարտեզի:
Խնդիրների բնագավառ 3 Երեխաների գործունեության կազմակերպում	
Աշխատանքային գործընթացը	Ելնելով սաների տարիքային և անձնային անհատականությունից՝ կազմակերպում է նրանց գործունեությունը:
Կատարման չափանիշներ	1. Նախագծում (պլանավորում) է իր և սաների գործունեությունը: 2. Գիտի իր սաների տարիքային և անհատական առանձնահատկությունները: 3. Երեխաների մոտ զարգացնում է հմտություններ, որոնք նպաստում են նրանց ինքնուրույնությանը, ազատ և անվտանգ գործողություններին, դիմացինին լսելու, նրա կարծիքը հարգելու ունակությունների ձևավորմանն ու արգացմանը: 4. Նպաստում է երեխայի ստեղծագործական երևակայության զարգացմանը: 5. Սաների գործունեության արդյունավետ կազմակերպման միջոցով ապահովում է անհրաժեշտ գիտելիքների ձեռքբերումը իր սաների կողմից: 6. Երեխաներն գործունեության ընտրության ազատության հնարարավորություն է ընձեռում: 7.Նպաստում է երեխայի սոցիալական զարգացմանը՝ համապատասխան միջավայր ստեղծելով, հարաբերություններ ձևավորելով և իր անձնական օրինակով,
Խնդիրների բնագավառ 4 Աշխատանքային նախագծերի կազմում և իրականացում	
Աշխատանքային գործընթացը	Դիտարկում և հետազոտում է երեխաների գործունեությունը և արդյունքները մշակելով՝ կազմում է հետագա աշխատանքների նախագիծ և իրականացնում այն:

Կատարման չափանիշներ	1.Դիտարկում, հետազոտում է երեխայի գործունեությունը և համապատասխան եզրահանգումներ անում, պարզում է երեխայի հետաքրքրությունների շրջանակը և դրան համապատասխան կազմա-կերպում, ուղղորդում է երեխայի գործունեությունը՝ նպաստելով այդ հետաքրքրությունների բավարարմանը: 2. Իրականացնում է տոներ, ծեսեր, ներկայացումներ, կազմակերպում է սաների գործունեությունն ամփոփող միջոցառումներ՝ ցուցադրություններ, սաների անհատական փաթեթների և գործունեության ընթացքում ստեղծած նյութերի, ստեղծագործությունների, իրերի շնորհանդեսներ: 3. Պլանավորում և կազմակերպում է ուսումնական ճամփորդություններ:
Խնդիրների բնագավառ 5.	**Ծնողի իրազեկում և կրթում**
Աշխատանքային գործընթացը	Իրականացնում է ծնողի իրազեկման և կրթման աշխատանքներ:
Կատարման չափանիշներ	1. Նախադպրոցական հաստատությունում ապահովում է ծնողների մասնակցությունը երեխաների գործունեությանը: 2. Ծնողական համայնքին ներկայացնում է հաստատությունում իրականացվող ծրագիրն ու մեթոդները: 3. Պարզում է ծնողի կրթական կարիքները և ըստ այդմ կազմակերպում է ծնողական սեմինարներ: 4. Ծնողների համար Երեխաների զարգացմանը, նրա կարիքներինրին վերաբերող խորհրդատվություն է ապահովում: 5. Ծնողին մասնակից է դարձնում միջավայրի հարստացմանն ու երեխաների գործունեությանը:
Խնդիրների բնագավառ 6	**Նախապատրաստում դպրոցին**
Աշխատանքային գործընթացը	Ճիշտ է պատկերացնում դպրոցի խնդիրները և ապահովում է երեխաների կրթության ծարունակակնությունն ու անընդհատությունը:
Կատարման չափանիշներ	Երեխաների մոտ զարգացնում է անհրաժեշտ հմտություններ, գիտելիքներ և անձնային որակներ, որոնք կնպաստեն նրանց՝ դպրոցին նախապատրաստվելուն, ուսուցողական գործանթացն առանց ցնցումների սկսելուն:
Խնդիրների բնագավառ 7	**Ինքնակրթություն**
Աշխատանքային գործընթացը	Անընդհատ զբաղվում է ինքնակրթությամբ և իր մասնագիտական զարգացմամբ:
Կատարման չափանիշներ	1. Մասնակցում է մասնագիտական որակավորման բարձրացման տարբեր վերապատրաստումների և սեմինարների: 2. Համացանցից և այլ աղբյուրներից նյութեր է ձեռք բերում, մշակում է դրանք, ներկայացնում համապատասխան լսարաններում: 3. Ուսումնական նյութեր է ստեղծում: 4. Հետևողականորեն յուրացնում է տեխնոլոգիական նորությունները: 5. Անընհատ կատարելագործում է իր տեխնիկական հմտությունները
Մասնագիտական գիտելիքներ, կարողություններ, հմտություններ և վերաբերմունք	
Լեզուներ	հայերեն - գերազանց երկու օտար լեզուների մասնակի իմացություն, շփվելու և մասնագիտական գրականությունից օգտվելու համար
Համակարգիչ	MS Word Internet Explorer՝ Power Point
Գիտելիքները	• մայրենի լեզվի գերազանց իմացություն • բնությանը, բնության երևույթներին վերաբերող անհրաժեշտ գիտելիքներ • հայ և համաշխարհային դասական մանկագրության, բանահյուսական նյութի իմացություն • նախադպրոցական հաստատություններում ուսուցանվող երգերի և պարերի իմացություն

Կարողությունները և հմտություններ	• հետազոտական աշխատանք կատարելու կարողություն • ինքնակրթությամբ զբաղվելու սովորություն և կարողություն • տեխմիջոցներով (նաև կենցաղային տեխնիկայով) աշխատելու և համացանցից (ինտերնետից) օգտվելու կարողություն. • ուսումնական նյութեր ստեղծելու հմտություն • մեծահասակների (գործընկերների, ծնողների, այլոց) մասնագիտական զարգացումը կազմակերպելու սեմինարներ վարելու հմտություն • երեխայի գործունեությունը հետաքրքիր և նպատակային կազմակերպելու հմտություն • դյուրին հաղորդակցվելու կարողություն • ծնողական համայնքի և այլ կազմակերպությունների հետ համագործակցելու կարողություն
Վերաբերմունքը	նախաձեռնող, պատասխանատու, պարտաճանաչ, կարգապահ, հաղորդակցվող, խնայող

Հավելված 2

«ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ «ԴԱՍՏԻԱՐԱԿ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՇՆՈՐՀՄԱՆ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ

«ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» մասնագիտության «դաստիարակ» որակավորման շնորհման՝ մասնագիտական գիտելիքների և կարողությունների գնահատման չափանիշներն են.

1.Համապատասխան պետական կրթական (որակավորման) չափորոշչի բոլոր մոդուլների ուսումնառության արդյունքներով սահմանված մասնագիտական գիտելիքները, որոնց ստուգումն իրականացվում է բանավոր հարցման, գրավոր ստուգումների, ռուբրիկների, թղթապանակների, համալիր թեսթային հարցման կամ ներկայացումների (պրեզենտացիաների) միջոցով: Ստուգման համար կիրառվող բոլոր ձևերը բաղկացած են վերոնշյալ բոլոր ուսումնառության արդյունքներին վերաբերող նյութերից: Արդյունքը համարվում է բավարար, եթե ճիշտ պատասխաններ են տրվել ստուգման մեջ առաջադրված հարցերի և առաջադրանքների առնվազն 95% - ին:

2.Մասնագիտական կարողությունները, որոնց ստուգման համար պահանջվում է առաջադրված կոնկրետ խնդիր, որը տնական գործունեություն է պահանջում, գնահատման չափանիչները սահմանվում են ըստ տվյալ մոդուլի կոնկրետ արդյունքին համապատասխան սահմանված չափանիշների: Դրանք իրենց մեջ կարող են ներառել.

- տրված առաջադրանքի ընկալման մեկնաբանություն
- նախագծի մշակում
- աշխատանքի պլանավորում
- գործնական աշխատանք/ համապատասխան քայլերով
- կատարված աշխատանքի ներկայացում
- աշխատանքի վերլուծություն և ինքնագնահատում

Արդյունքը համարվում է բավարար, եթե վերոնշյալ գործողությունների առնվազն 90% - ը կատարվել է չափորոշիչներով նախատեսված չափանիշներին համապատասխան՝ պահպանելով աշխատանքի անվտանգության և հիգիենայի կանոններն ու նորմերը: